*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ՀՊ*
*2019թ. փետրվարի 7-ի թիվ 2/5 որոշմամբ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/12 և հոկտեմբերի 19-ի թիվ 13/4 որոշումներ: |
| **Հաշվեքննության օբյեկտը** | ՀՀ առողջապահության նախարարություն: |
| **Հաշվեքննության առարկան** | Բժշկական օգնության և սպասարկման իրականացում լիցենզավորման գործընթաց: |
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ: |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը ներառյալ /ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 19/12 որոշմամբ երկարացվել է մինչև 2019 թվականի մարտի 29-ը/: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը** | Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հաշվեքննության զննում, դիտարկում, արտաքին հաստատում, հարցում ընթացակարգերը: |
| **Հաշվեքննության ծավալը** | Ընտրանքային կարգով հաշվեքննության է ենթարկվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում լիցենզավորման գործընթացը: Ընդհանուր առմամբ հաշվեքննվող ժամանակաշրջանում բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի համար տրամադրվել են շուրջ 400 լիցենզիաներ: |
| **Հաշվեքննության նպատակը** | Հաշվեքննության նպատակն է՝ գնահատել լիցենզավորման գործընթացի կազմակերպման և իրականացման որակը: Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով.<br>• արդյո՞ք անհրաժեշտ է բարելավել ներքին գործընթացները,<br>• օգտագործվա՞ծ են արդյոք տեղեկատվության հավաքման բոլոր հնարավորությունները,<br>• արդյո՞ք բավականաչափ օգտագործված են տեխնիկական միջոցները (օրինակ՝ տվյալների բազաներ),<br>• արդյո՞ք առկա են կարգավորման բացթողումներ, որոնք դժվարացնում են ստանդարտացված լիցենզավորման գործընթացները: |

**Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

# I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ բժշկական օգնության և սպասարկման իրականացում լիցենզավորման գործընթացի կատարման արդյունավետությունը և համապատասխանությունն իրավական ակտերին:

### *Հաշվեքննողի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք լիցենզավորման գործընթացի՝ արդյունավետության, օրենքներին ու իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 300 – Կատարողականի աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք առ այն, որ լիցենզավորման գործընթացի իրականացումը զերծ է էական անհամապատասխանություններից և իրականացվում է արդյունավետորեն:

Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով էական խեղաթյուրման և լիցենզավորման գործակալության կողմից իրականացվող գործընթացի էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքի հիմնավորման համար:

### *Ոչ լիարժեք եզրահանգման հիմք*

Հաշվեքննությամբ պարզվել է, որ՝

ա/ ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվող «Բժշկական օգնության և սպասարկման իրականացում» գործունեության տեսակի լիցենզավորման գործընթացներում առկա են անհամապատասխանություններ ՀՀ օրենսդրության պահանջների հետ, մասնավորապես՝ լիցենզավորող մարմնի կողմից չի իրականացվել ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Հավելված 5-ի 17–րդ կետի պահանջը, որի արդյունքում չեն սահմանվել առանձին բժշկական սարքավորումների համար սահմանված օգտագործման ժամկետներ և հնարավոր այլ անհրաժեշտ

չափորոշիչներ, որոնց չբավարարումը, ըստ Լիցենզավորման կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի, հանդիսանում է հայտերի մերժման հիմք:

բ/ Լիցենզավորման կարգով սահմանված՝ 18-րդ կետի պահանջով իրականացված լիցենզավորման գործընթացը հանգեցրել է մի իրավիճակի, որ լիցենզավորվող անձինք մասնագիտական ապահովվածությանը վերաբերող փաստաթղթերը ներկայացնում են արդեն իսկ լիցենզավորվելուց հետո /գործունեությունը սկսելուց 5 օր առաջ/, որը հնարավորություն չի ընձեռնում մինչև անձանց լիցենզիա տրամադրելը գնահատել նրանց մասնագիտական ապահովվածության համապատասխանությունը սահմանված պահանջներին:

գ/ 01.01.2017-01.11.2018թթ. ընթացքում շուրջ 400 լիցենզավորված անձանցից 268-ը չեն ներկայացրել մասնագիտական որակավորման վերաբերյալ փաստաթղթեր, որոնք ըստ Լիցեզավորման կարգի 18-րդ կետի պահանջի պետք է ներկայացվեն լիցենզավորված գործունեությունը սկսելուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

268 լիցենզավորված անձանց կազմից, որոնք գործունեություն են ծավալել և չեն ներկայացրել մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերը, համաձայն «Լիցենզա-վորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջի, լիցենզիայի գործողության կասեցման հիմք է:

դ/ ՀՀ Առողջապահության նախարարությունը բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի լիցենզավորման գործընթացներն իրականացրել է ՀՀ օրենսդրության պահանջները անտեսելով, որի արդյունքում չի իրականացրել Ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումներ:

ե/ Այն դեպքերում, երբ լիցենզավորվող անձանց ներկայացրած հայտերը չեն համապատասխանել ՀՀ օրենսդրության պահանջներին, սակայն լիցենզավորման հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն և անձինք լիցենզավորվել են, պետք է փաստել, որ Հանձնաժողովի եզրակացությունները հակասել են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 29.06.02թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի՝ 20-րդ կետի, ինչպես նաև լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրության 2, 18 և 19 կետերի պահանջներին:

զ/ Լիցենզավորման գործընթացներում լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության վերաբերյալ ուսումնասիրություններն անհրաժեշտ է իրականացնել բոլոր հայտատուների մոտ, այլ ոչ թե 80%-ի մոտ՝ բացառելով ընտրանքային ուսումնասիրություններ իրականացնելու մոտեցումը /ՀՀ առողջապահության նախարարի 03.09.2014թ. «Ընտրանքային ուսումնասիրության կարգը սահմանելու մասին» թիվ 58-Ն հրամանի պահանջներ/:

### *Ոչ լիարժեք եզրահանգում*

ա/  Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության՝ լիցենզավորման գործընթացը, բոլոր էական առումներով, համապատասխանում է իրավական ակտերին:

բ/ Չի պահպանվել բժշկական օգնության և սպասարկման գործունեության լիցենզավորման իրականացման նպատակային արդյունավետության սկզբունքը:

Դավիթ Չիբուխչյան՝
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
7 փետրվարի 2019 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

# II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

**Բժշկական օգնության և սպասարկման իրականացումը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է**

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի՝ լիցենզավորման նպատակը անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումն է:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով հաստատված աղյուսակի՝ բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակը ենթակա է լիցենզավորման:

Հայաստանի Հանրապետությունում պետական լիազոր մարմինների կողմից լիցենզավորման գործընթացներն իրականացնելու ընթացքում՝ լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև իրավական այլ ակտերով:

Համաձայն օրենսդրության պահանջների, ՀՀ կառավարության կողմից 2002թ. հունիսի 29-ին ընդունվել է թիվ 867-Ն որոշումը, որի Հավելված 5-ով հաստատվել է կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգը (այսուհետև՝ Լիցենզավորման կարգ):

# III. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

## Ա. Իրականացված լիցենզավորման գործընթացի տեխնիկական որակավորման պահանջների վերաբերյալ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանվել է, որ լիցենզավորման ենթակա գործունեության առանձին տեսակների իրականացման համար, եթե պահանջվում է հատուկ տեխնիկական պայմանների առկայություն, ապա լիցենզավորման ենթակա նման գործունեությամբ զբաղվելու համար կարող են սահմանվել կոնկրետ **տեխնիկական պահանջներ և պայմաններ**:

Վերլուծելով ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգով սահմանված՝ տեխնիկական և մասնագիտական որակավորման վերաբերյալ դրույթների պահանջները, պետք է նշել որ դրանցով սահմանվել են՝

14-րդ կետ.

*- բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պետք է ապահովեն ՀՀ օրենսդրությամբ բժշկական հաստատություններին ներկայացվող կառուցվածքային, մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պայմաններին և պահանջներին ու շինարարական նորմերին համապատասխանությունը,*

17-րդ կետ.

*- բժշկական սարքավորումների օգտագործման ժամկետը չպետք է գերազանցի լիազոր մարմնի կողմից՝ առանձին բժշկական սարքավորումների համար սահմանված ժամկետները,*

/նշված դրույթները ուժի մեջ են մտել 15.01.2013թ.-ից ՀՀ կառ. 20.09.2012թ. թիվ 1239-Ն որոշում/:

18-րդ կետ.

*-լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում կրթության, ինչպես նաև հետբուհական կրթության վկայականի, շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրի կամ մասնագիտական գործունեության հավաստագրի պատճենները համաձայն ՀՀ կառավարության* ***05.12.2002թ. թիվ 1936-Ն*** *կամ* ***29.10.2009թ. թիվ 1275-Ն*** *որոշումների:*

**05.12.2002թ. թիվ 1936-Ն** և **29.10.2009թ. թիվ 1275-Ն** որոշումները ընդունվել են համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 15-րդ հոդվածների պահանջների, որոնցով սահմանվել են բժշկական օգնության և սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները,

20-րդ կետ /**Լիցենզիայի մերժման հիմքերը** բաժին/.

*-լիցենզիա ստանալու մասին* ***հայտը մերժվում է,*** *եթե այն չի համապատասխանում կարգի 14-րդ և 17-րդ կետերով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին:*

Համադրելով լիցենզավորող մարմնի կողմից 01.01.2017-01.11.2018թթ. ընթացքում իրականացրած լիցենզավորման գործընթացը վերը նշված Լիցենզավորման կարգի դրույթների հետ, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներին, պետք է նշել, որ.

### Չեն սահմանվել առանձին բժշկական սարքավորումների համար սահմանված օգտագործման ժամկետներ և հնարավոր այլ անհրաժեշտ չափորոշիչներ

ՀՀ Առողջապահության նախարարությունը, դեռևս 15.01.2013թ.-ից սկսած, բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի լիցենզավորման գործընթացներն իրականացրել է ՀՀ օրենսդրության պահանջներն անտեսելով՝ մասնավորապես, լիցենզավորող մարմնի կողմից չի իրականացվել ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Հավելված 5-ի 17–րդ կետի պահանջը, որի արդյունքում չեն սահմանվել առանձին բժշկական սարքավորումների համար սահմանված օգտագործման ժամկետներ և հնարավոր այլ անհրաժեշտ չափորոշիչներ, որոնց

չբավարարումը, ըստ Լիցենզավորման կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի, հանդիսանում է հայտերի մերժման հիմք:

Լիցենզավորող մարմնի կողմից նշված ժամանակաշրջանում լիցենզավորվող անձանց մոտ բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պահանջները դիտարկել է միայն ՀՀ կառավարության 05.12.2002թ. թիվ 1936-Ն կամ 29.10.2009թ. թիվ 1275-Ն որոշումներով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների տեսանկյունից:

Նշված որոշումներով բժշկական օգնության և սպասարկման գործունեության առանձին տեսակների համար սահմանված են անհրաժեշտ բժշկական սարքավորումների և պարագաների ցանկը՝ առանց որևէ չափորոշիչների:

Արդյունքում լիցենզավորող մարմնի կողմից իրականացված ուսումնասիրությունների ժամանակ լիցենզավորվող անձանց մոտ փաստվել է միայն բժշկական սարքավորումների **առկայությունը** և դրանց համապատասխանությունը վերը նշված ցանկերին:

---

***Լիազոր մարմնի կողմից Լիցենզավորման կարգի 17-րդ կետի պահանջի չկատարումը, ինչպես նաև չկանոնակարգելը հանգեցրել է մի իրավիճակի, որ լիցենզավորվող անձինք կարող են ներկայացնել /հետագայում նաև օգտագործել/ ժամանակակից չափորոշիչներին չբավարարող, բարոյապես մաշված /վաղ արտադրության սարքեր՝ այդ թվում ճառագայթային և այլ սարքեր/, չստուգաչափված և տեղում ժամանակավորապես տեղադրված սարքեր և այլն:***

---

Պետք է նշել, որ վերը նշված մոտեցումը /առանց սարքավորումների համար չափորոշիչների սահմանման/ չի ապահովում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պահանջների իրականացումը: Այսպես, նշված օրենքով սահմանվել են բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակների նկատմամբ պահանջները՝

ա/ առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ, որը երաշխավորվում է պետության կողմից.

բ/ մասնագիտացված բժշկական օգնությունը՝ որպես ախտորոշման և բժշկական առանձնահատուկ մեթոդների ու բարդ բժշկական տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ:

Պետք է նշել, որ ՀՀ կառավարությունը 27.03.2008թ.-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» թիվ 276-Ն որոշումը՝ համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի պահանջների, վերջինս հիմք է ընդունվել լիցենզավորման գործընթացներում:

## Բ. Իրականացված լիցենզավորման գործընթացի մասնագիտական որակավորման պահանջների վերաբերյալ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի /ընդունվել է 2001թ.-ին/ 13-րդ հոդվածով սահմանվել է, որ լիցենզավորման ենթակա այն գործունեության տեսակները, որոնց իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ, ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև լիցենզավորման կարգերով կարող են սահմանվել մասնագիտական որակավորման պահանջներ:

ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի 14-րդ, 18-րդ և 20-րդ կետերով սահմանվել է մասնագիտական որակավորման վերաբերյալ դրույթները՝ մասնավորապես 14-րդ կետով նախատեսվել է, որ լիցենզավորվող անձինք պետք է ապահովեն ՀՀ օրենսդրությամբ բժշկական հաստատություններին ներկայացվող մասնագիտական ապահովվածությանը ներկայացվող պայմանները և պահանջները:

18-րդ կետով սահմանվել է, որ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունը սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում կրթության վկայականների և ՇՄՁ հավաստագրերի պատճենները՝ համաձայն ՀՀ կառավարության 05.12.2002թ. թիվ 1936-Ն կամ 29.10.2009թ. թիվ 1275-Ն որոշումների: (30.06.16թ. N 669-Ն, ուժի մեջ է 06.01.2017թ-ից):

Համադրելով լիցենզավորող մարմնի կողմից 24.12.13-01.11.2018թթ. ընթացքում իրականացրած լիցենզավորման գործընթացը վերը նշված Լիցենզավորման կարգի դրույթների, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներին, պետք է նշել, որ լիցենզավորվող անձանց մոտ մասնագիտական որակավորման ապահովվածությանը ներկայացվող պահանջները դիտարկել և իրականացրել է ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի 18-րդ կետով սահմանված պահանջների տեսանկյունից և լիցենզավորված անձինք լիցենզավորված գործունեությունը սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին են ներկայացրել կրթության վկայականների և ՇՄՁ հավաստագրերի պատճենները:

Սակայն պետք է նշել, որ ըստ Լիցենզավորման Կարգի 14-րդ կետի՝ որում ներառված դրույթները բխել են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ, 15-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներից լիցենզավորվող անձինք պետք է ապահովեն բժշկական հաստատություններին ներկայացվող մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պարտադիր պահանջները, որոնց չապահովելը, ըստ նույն Կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի՝ լիցենզիա տրամադրելու մերժման հիմք է:

Լիցենզավորման կարգով սահմանված՝ 18-րդ կետի պահանջով իրականացված լիցենզավորման գործընթացը հանգեցրել է մի իրավիճակի, որ լիցենզավորվող անձինք մասնագիտական ապահովվածությանը վերաբերող փաստաթղթերը ներկա-յացնում են արդեն իսկ լիցենզավորվելուց հետո /գործունեությունը սկսելուց 5 օր առաջ/, որը հնարավորություն չի ընձեռնում մինչև անձանց լիցենզիա տրամադրելը գնահատել նրանց

մասնա-գիտական ապահովվածության համապատասխանությունը սահմանված պահանջներին /Լիցենզավորման Կարգի 14-րդ կետ/:

**Ներկայացվում են միայն կրթության վկայականների և ՇՄԶ հավաստագրերի պատճենները**

Դեռ ավելին, ներկայացվում են միայն կրթության վկայականների և ՇՄԶ հավաստագրերի պատճենները, արդյունքում, կարող են լինել դեպքեր, որ ներկայացված մասնագետները որևէ պարտավորություն չունենան լիցենզավորվող անձանց հետ համատեղ աշխատանքներ իրականացնելու համար:

Նշված հանգամանքները բացառելու նպատակով անհրաժեշտ է լիցենզավորման կարգերում նախատեսել, որ կրթության վկայականների հետ ներկայացվի նաև գործունեության իրականացման համար անհրաժեշտ մասնագետների և լիցենզավորվող անձանց միջև կնքված աշխատանքային պայմանագրեր կամ համատեղ աշխատանք իրականացնելու պարտավորագրեր, որոնք լիազոր մարմնին պետք է ներկայացվի մինչև անձանց լիցենզիա տրամադրելը՝ վերջիններիս մասնագիտական ապահովվածության համապատասխանության գնահատման նպատակով:

**Շուրջ 400 լիցենզավորված անձանցից 268-ը չեն ներկայացրել համապատասխան փաստաթղթերը**

Ուսումնասիրելով 01.01.2017-01.11.2018թթ. ընթացքում լիցենզավորված անձանց կողմից գործակալություն ներկայացված մասնագիտական որակավորման փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ պարզվեց, որ շուրջ 400 լիցենզավորված անձանցից նշված ժամանակշրջանում 268-ը չեն ներկայացրել համապատասխան փաստաթղթերը /Հավելվածներ 1.1 և 1.2/:

Հաշվի առնելով, որ սահմանված փաստաթղթերը՝ ըստ լիցենզավորման կարգի 18-րդ կետի պահանջի, պետք է ներկայացվեն լիցենզավորված գործունեությունը սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ, կարելի է փաստել, որ նշված անձինք կա՛մ գործունեությունը չեն ծավալել, կա՛մ հանրությանը ծառայություններ են մատուցել՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների անհամապատասխանությամբ:

Միաժամանակ պետք է նշել, որ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի *36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջի, լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել,* եթե լիցենզավորված անձը մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները լիցենզավորող մարմին սահմանված կարգով չի ներկայացրել: Հետևաբար, 268 լիցենզավորված անձանց կազմից, որոնք գործունեություն են ծավալել և չեն ներկայացրել մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները ՀՀ օրենքով սահմանված կարգով, կարող էր կասեցնել վերջիններիս լիցենզիան:

Ընտրանքային կարգով դիտարկելով 01.01.2017-01.11.2018թթ. ընթացքում բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման ծրագրի /ՀՀ ԱՆ 17.09.15թ. թիվ 49-Ն հրաման/ շրջանակում՝ ՀՀ առողջապահության նախարարության և բժշկական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի ռեեստրը, պարզվեց, որ նշված ցանկերում ներառված են կազմակերպություններ, որոնք առկա են նաև վերը նշված 268 կազմակերպությունների ցանկում:

Պետական պատվերի պայմանագրեր են կնքվել «Արինտերլև» ՍՊԸ «Ուջանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ, «Մեծամորի բժշկական կենտրոն», «Թիվ 5 պոլիկլինիկա», «Թիվ 22 պոլիկլինիկա», «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների համար, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ և այլ կազմակերպությունների հետ /Հավելված 1.1/:

Մասնավորապես՝ «Արինտերլև» ՍՊ ընկերության հետ ՀՀ ԱՆ աշխատակազմը 09.02.2017թ.-ին կնքել է «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» թիվ ԾՁԲ-06830000 պայմանագիրը, «Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի հետ կնքել է թիվ ԾՁԲ - 01080000 պայմանագիրը, «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի հետ կնքել է թիվ ԾՁԲ–00940000 պայմանագիրը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի հետ կնքել է թիվ ԾՁԲ-00650000 պայմանագիրը և այլն:

Հետևաբար նշված կազմակերպությունները 2017թ. և 2018թ. ընթացքում ծավալել են գործունեություն, ուստի լիազոր մարմինը վերահսկող կառույցների միջոցով կարող էր վերահսկել վերջիններիս գործունեությունը և ՀՀ օրենսդրության պահանջների հետ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում սահմանված կարգով ընթացք տալ:

Հավելված 1.3-ում ընտրանքային կարգով բերված են վերը նշված կազմակերպությունների լիցենզավորված գործունեության տեսակները /սյունակ 5/, որոնց հետ պետական պատվերի տեղադրման ծրագրի շրջանակում կնքվել են պայմանագրեր:

Ընտրանքային կարգով դիտարկելով ՀՀ ԱՆ աշխատակազմի և «ԱՐԻՆՏԵՐԼԵՎ» ՍՊԸ-ի միջև 09.02.2017թ.–ին կնքված թիվ ՀՀԱՆՊԱԳ-ԾՁԲ-06830000 պայմանագիրը պարզվեց, որ պայմանագրում ներառվել են ծառայությունների այնպիսի տեսակներ, որոնց գործունեության իրականացման համար հայտատուն դիմել է լիցենզավորող մարմնին և 20.01.2017թ.-ին լիցենզավորվել է և ստացել թիվ Կ-ԲՕ-002227 լիցենզիան:

**«ԱՐԻՆՏԵՐԼԵՎ» ՍՊԸ-ն, չներկայացնելով մասնագիտական որակավորման փաստաթղթեր լիցենզավորվել է և հանրությանը մատուցել համապատասխան ծառայություններ**

Այսպիսով, «ԱՐԻՆՏԵՐԼԵՎ» ՍՊ ընկերությունը լիցենզավորվելուց հետո չի ներկայացրել մասնագիտական որակավորման փաստաթղթերը, որը համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի լիցենզիայի գործողության կասեցման հիմք է, դեռ ավելին, վերջինիս հետ կնքվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագիր և Ընկերությունը հանրությանը մատուցել է համապատասխան ծառայություններ:

Հաշվի առնելով, որ ըստ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի, լիցենզավորման նպատակը անձանց կյանքին, առողջությանը, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումն է, նմանատիպ խնդիրները կարող էին կանոնակարգվել լիազոր մարմնի կողմից, քանի որ իր կառուցվածքում ներառված են եղել

լիցենզավորման գործակալությունը և առողջապահական պետական տեսչությունը, որը վերակազմակերպվել է առողջապահական տեսչական մարմնի /գործել է մինչև 30.06.18թ./ և նրանց կանոնադրություններով վերջիններիս վերապահվել է հետևյալ գործառույթները՝

-համաձայն լիցենզավորման գործակալության կանոնադրության *8-րդ կետի 7-րդ ենթակետի՝ գործակալությունը իրականացնում է լիցենզավորված սուբյեկտների մասին տեղեկությունների հաշվառումը, վերլուծությունը և գնահատումը* /ՀՀ կառ. 30.09.10թ. թիվ 1319-Ն որոշում/,

-համաձայն առողջապահական պետական տեսչության կանոնադրության *8-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առողջապահության բնագավառում լիցենզավորված անձանց կողմից տվյալ գործունեության իրականացման համար սահմանված պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ ստուգումների իրականացումը* /ՀՀ կառ. 25.07.13թ. թիվ 857-Ն որոշում/

-համաձայն առողջապահական տեսչական մարմնի կանոնադրության 11-րդ կետի 14-րդ ենթակետի՝ տեսչական մարմինը՝ իր իրավասության սահմաններում իրականացվող վերահսկողության արդյունքում հայտնաբերված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների և պայմանների խախտումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է լիցենզավորող մարմիններին /ՀՀ կառ. 27.04.17թ. թիվ 444-Ն որոշում/:

Դեռ ավելին, առողջապահական տեսչական մարմինը 13.12.2017թ.-ին թիվ 4/39761-17 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմին՝ իր կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության՝ ըստ ռիսկայնության տնտեսավարող սուբյեկտների դասակարգում կատարելու նպատակով, խնդրել է տրամադրել տնտեսավարող սուբյեկտների ռիսկի գնահատման չափանիշների հաշվարկման և համապատասխան ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ի պատասխան 13.12.2017թ. թիվ 4/39761 գրության, աշխատակազմը 15.12.2017թ. թիվ ՆՁ/14.2/15590-17 գրությամբ տեսչական մարմնին տրամադրել է լիցենզավորման գործակալության կողմից վարվող լիցենզիաների գրանցամատյանում պահպանվող ամբողջական տեղեկատվությունը՝ տրամադրված լիցենզիաների վերաբերյալ **26.08.2002-04.12.2017թթ.**. դրությամբ:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, գրանցամատյանում ներառվում են լիցենզավորված անձանց անվանումը, գտնվելու վայրը, լիցենզիայի համարը, տրամադրման ամսաթիվը, գրանցման համարը, գործունեության տեսակը, իրականացման վայրը, գործողության ժամկետը տեղեկատվությունները:

Հետևաբար, ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմը լիցենզավորված անձանց վերաբերյալ գրանցամատյանում պահպանվող ամբողջական տեղեկատվության հետ միասին 15.12.2017թ.-ին առողջապահական տեսչական մարմնին կարող էր տրամադրել նաև տեղեկատվություն լիցենզավորված անձանց վերաբերյալ, որոնք մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները լիցենզավորող մարմին 01.01.17-15.12.17թթ. դրությամբ չեն ներկայացրել:

## Գ. Իրականացված լիցենզավորման գործընթացի մասնագիտական որակավորման ստուգման վերաբերյալ

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված *Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների* աղյուսակի պահանջի, Կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի համար սահմանվել է, որ նշված գործունեության տեսակներով զբաղվելու լիցենզիան տալու համար կարող է իրականացվել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգում:

Հիմք ընդունելով օրենքի պահանջները, ՀՀ կառավարության 29.02.2002թ թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի հավելված 5-ի 6-րդ կետով սահմանվել է, որ <<*Բժշկական օգնության և սպասարկման իրականացման դեպքում աշխատանքն իրականացնող համապատասխան մասնագետների գործունեության համար պահանջվում է մասնագիտական որակավորման ստուգում, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով*>>: /Նշված դրույթը ուժի մեջ է մտել 15.01.2013թ.-ից ՀՀ կառավարության 20.09.2012թ. թիվ 1239-Ն որոշում/:

**ՀՀ առողջապահության նախարարությունը լիցենզավորման գործընթացներն իրականացրել է՝ չկատարելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և Լիցենզավորման կարգի մի շարք պահանջներ, որի արդյունքում չեն իրականացրել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումները**

Հարկ է նշել, որ ՀՀ Առողջապահության նախարարությունը 15.01.2013-01.11.2018թթ.. ընթացքում լիցենզավորման գործընթացները իրականացրել է անտեսելով և չկատարելով ՀՀ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի /որակավորման պահանջի մասով/, 13-րդ հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաև 14-րդ հոդվածի պահանջները՝ մասնավորապես.

*-Ֆիզիկական անձանց որակավորումը ստուգում են համապատասխան լիցենզավորող մարմնի կողմից ստեղծված որակավորման հանձնաժողովները…*

*-Որակավորման հանձնաժողովների կազմավորման կարգերը և կանոնադրությունները հաստատում են լիցենզավորող մարմինները…*

*-Որակավորման ստուգումը պետք է իրականացվի լիցենզավորման համապատասխան կարգը հաստատելու իրավունք ունեցող մարմնի հաստատած որակավորման կարգին համապատասխան…*

*-Որակավորման կարգերը պետք է կազմվեն մանրամասն, պարզ և չպետք է սահմանեն դրույթներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն և այլն:*

Նշված ժամանակաշրջանում ՀՀ ԱՆ-ի կողմից չի կատարվել նաև ՀՀ կառավարության 29.02.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի հավելված 5-ի 6-րդ կետի պահանջները:

Այսպիսով, ՀՀ Առողջապահության նախարարությունը 01.01.17-01.11.18թթ. ընթացքում բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի

լիցենզավորման գործընթացներն իրականացրել է ՀՀ օրենսդրության պահանջները անտեսելով, որի արդյունքում չի իրականացրել Ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումները:

Լիցենզավորված /լիցենզավորվող/ անձանց մոտ մասնագիտական պահանջների գնահատման նպատակով լիազոր մարմինը կարող է ստեղծել միասնական տեղեկատվական բազա, որը կներառի լիցենզավորված անձանց մասնագիտական ապահովվածության, Ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումների, Ֆիզիկական անձանց շարունակական մասնագիտական զարգացման՝ ՇՄԶ գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն՝ հաշվի առնելով, որ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջի, 2021 թվականի հունվարի 1-ից ՇՄԶ հավաստագիր չունեցող անձանց չի թույլատրվելու իրականացնել իրենց մասնագիտական գործունեությամբ պայմանավորված աշխատանքային պարտականությունները:

## Դ. Լիցենզավորման հանձնաժողովի գուծունեության վերաբերյալ

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ լիցենզավորող մարմինն իր որոշումներն ընդունում է համապատասխան լիցենզավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Նույն օրենքի 40-րդ հոդվածը սահմանում է հանձնաժողովներում հարցերի քննարկման կարգը, մասնավորապես.

- հանձնաժողովները հարցերը քննարկում են իրենց նիստերում, որոնք իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին,

- հանձնաժողովների որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ փակ գաղտնի քվեարկությամբ:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ լիցենզավորող հանձնաժողովների կանոնադրությունները հաստատում են լիցենզավորող մարմինները:

Հիմք ընդունելով նշված պահանջը, ՀՀ առողջապահության նախարարը 15.11.2011թ. թիվ 20-Ն հրամանով հաստատել է ՀՀ առողջապահության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի /այսուհետև Հանձնաժողով/ կանոնադրությունը:

Հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստումը, լիցենզավորման վերաբերյալ կարծիքների հավաքագրումը, ամփոփումը և եզրակացությունները Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնում է լիցենզավորման գործակալությունը:

Ուսումնասիրելով 01.01.2017-01.11.2018թթ.. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստեղծված Հանձնաժողովի գուծունեությունը, պետք է նշել, որ գործակալությունը լիցենզավորման համար ներկայացված հայտերի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրությունների հիման վրա կազմված եզրակացությունները ներկայացնում է Հանձնաժողովի քննարկմանը, և

լիցենզավորող հանձնաժողովը իր նիստերում փակ գաղտնի քվեարկությամբ կայացնում է որոշումներ:

Դիտարկելով նշված ժամանակաշրջանում լիցենզավորման գործակալության կողմից ուսումնասիրված և բացասական գնահատված եզրակացությունները, երբ ներկայացված հայտերը չեն համապատասխանել ՀՀ օրենսդրության պահանջներին՝ պարզվեց, որ կան դեպքեր, երբ լիցենզավորող հանձնաժողովը դրական եզրակացություն տալու վերաբերյալ որոշումներ է կայացրել և հայտ ներկայացրած անձինք լիցենզավորվել են:

**Մի շարք դեպքերում լիցենզավորման գործակալության կողմից բացասական եզրակացություն ստացած հայտերի վերաբերյալ լիցենզավորող հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել և հայտատուները լիցենզավորվել են**

Օրինակ՝

**1.** «ԻՆՆՈՎԱ ՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտին գործակալությունը 04.04.2017թ.-ին տվել է բացասական եզրակացություն ՀՀ օրենսդրության պահանջներին 13 կետով անհամապատասխանության վերաբերյալ, մասնավորապես.

ա/ կենսաքիմիական (բիոքիմիական) լաբորատորիայում բացակայում է ջրի դեիոնիզացնող սարքը,

բ/ ներզատաբանական կաբինետում բացակայում են հասակաչափը և բժշկական կշեռքը՝ մեծերի և մանկական, սառնարանը, հանդերձապահարանը,

գ/ գինեկոլոգիական կաբինետում բացակայում են ավտոկլավը, ախտահանիչ սարքերը,

դ/ ընտանեկան ստոմատոլոգիական կաբինետում բացակայում են դիաթերմոկոագուլյատորը, վերին և ստորին ծնոտների ատամների հեռացման համար նախատեսված աքցանների և ամբարձիչների հավաքածուն, կլորաշուրթ աքցանը (կրամպոն),

ե/ ճառագայթային ախտորոշման (ռենտգեն) սենյակում բացակայում են հետազոտվողների համար՝ պաշտպանիչ գոգնոցը, սփռոցը, անձնակազմի համար՝ ճառագայթապաշտպան մեծ շիրման,

զ/ մանրէազերծման սենյակում բացակայում է ուլտրասոնիկ նախամանրէազերծման սարքը և այլն:

Գործակալության եզրակացությունում բերված է նաև, որ նշված անհամապատասխանությունները, ըստ Լիցենզավորման կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի, հանդիսանում են հայտի մերժման հիմք, սակայն Հանձնաժողովը փակ գաղտնի քվեարկությամբ տվել է դրական եզրակացություն և կազմակերպությունը լիցենզավորվել է:

**2.** «Ուիգմոր Քլինիք»-ի կողմից ներկայացված հայտին գործակալությունը 20.07.2017թ.-ին տվել է բացասական եզրակացություն ՀՀ օրենսդրության պահանջներին 10 կետով անհամապատասխանության վերաբերյալ, մասնավորապես.

ա/ առաջին մակարդակի վերակենդանացման բաժանմունքում բացակայում են ողնաշարի անշարժեցման վակումային բեկակալները,

բ/ երրորդ մակարդակի վնասվածքաբանական օրթոպեդիկ բաժանմունքում բացակայում են բեկերի բեկակալները՝ տարբեր չափերի, մատի աղեղները՝ մանկական,

գ/ ինտենսիվ բուժման պալատում բացակայում են ճառագայթային տաքացնող լամպը, թթվածնի վրանները, շնչական խառնուրդի խոնավացուցիչները,

դ/ մանկական վերականգնողական բաժանմունքում բացակայում են հիդրոթերապիայի վաննաները,

ե/ մանկական վնասվածքաբանական-օրթոպեդիկ բաժանմունքում բացակայում են Բելերի շինաները (տարբեր չափերի), Բալկանյան ձողերը, Մաույի աղեղները, կմախքային ձգման աղեղները (սկոբաներ),

զ/ վիրահատարանում բացակայում են անաստոմոզների համար կարող ապարատներ և կարի ատրավմատիկ նյութերը, ճողվածքների ալոպլաստիկ նյութերը, Սեգալի լայնիչը, Բլեգմորի զոնդը, մագիստրալ անոթների կաթետերիզացիայի սարքավորումները, ստերնոտոմը,

է/ բացակայում են մաքուր և թարախային վիրակապարանները,

թ/ մաշկավեներաբանական կաբինետում բացակայում են կաթետերները (կոշտ),

ը/ կենսաքիմիական լաբորատորիայում բացակայում է ջրի դեիոնիզացնող սարքը և այլն:

Գործակալության եզրակացությունում բերված է, որ նշված անհամապատասխանությունները, ըստ Լիցենզավորման կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի, հանդիսանում են հայտի մերժման հիմք, սակայն Հանձնաժողովը փակ գաղտնի քվեարկությամբ տվել է դրական եզրակացություն և կազմակերպությունը լիցենզավորվել է:

**3.** Ա/Ձ Արմեն Մարգարյան կողմից ներկայացված հայտին գործակալությունը 25.10.2018թ.-ին տվել է բացասական եզրակացություն՝ ՀՀ օրենսդրության պահանջներին 4 կետով անհամապատասխանության վերաբերյալ, մասնավորապես.

ա/ մանրէազերծման սենյակում բացակայում են ուլտրասոնիկ նախամանրէազերծման սարքը, մանրէասպան լամպը կամ օդը վարակազերծող այլ միջոցները,

բ/ ընտանեկան ստոմատոլոգիական կաբինետում բացակայում է ստոմատոլոգիական դիաթերմոկոագուլյատորը և այլն:

Գործակալության եզրակացությունում բերված է նաև, որ ՀՀ օրենսդրության պահանջներին նշված 4 կետով անհամապատասխանությունները, ըստ Լիցենզավորման կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի, հանդիսանում են հայտի մերժման հիմք, սակայն Հանձնաժողովը փակ գաղտնի քվեարկությամբ տվել է դրական եզրակացություն և անձը լիցենզավորվել է և այլն:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի՝ լիցենզավորող հանձնաժողովների եզրակացությունները տրվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և լիցենզավորող հանձնաժողովների կանոնադրություններով նախատեսված կարգով:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարի 15.11.2011թ. թիվ 20-Ն հրամանով հաստատված առողջապահության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրության 2-րդ կետի՝ լիցենզավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով, իրավական այլ ակտերով և իր կանոնադրությամբ:

Կանոնադրության 8-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ.

*հանձնաժողովը՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և լիցենզավորման կարգերի հիման վրա՝ իր իրավասության շրջանակներում քննում է առողջապահության բնագավառի լիցենզիաներ ստանալու հայտերի՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքին, լիցենզավորման կարգերին, այլ իրավական ակտերին համապատասխանությունը և ըստ այդմ տալիս հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ եզրակացություններ,* որոնք ներկայացվում են ՀՀ առողջապահության նախարարին:

Ըստ կանոնադրության 18-րդ կետի՝

*հանձնաժողովի եզրակացությունները տրվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, լիցենզավորման կարգերի և այլ իրավական ակտերի հիման վրա՝ հաշվի առնելով հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, նրանց վերաբերյալ լիցենզավորման գործակալության ներկայացրած եզրակացությունը,*

ըստ կանոնադրության 19-րդ կետի՝

*հանձնաժողովի եզրակացության չափանիշներն են գործակալության եզրակացության համապատասխանությունը ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերին և հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերին:*

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է, որ լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե.

- դիմողի ներկայացրած փաստաթղթերը թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են,
- ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ օրենսդրության պահանջներին,

-օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսվում են այլ դեպքեր:

Լիցենզիա ստանալու հայտի մերժման դեպքերը հստակ սահմանված է նաև ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիզենզավորման կարգի հավելված 5-ի 20-րդ կետով՝ մասնավորապես.

-ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել կարգի 11-րդ կետով նախատեսված ժամկետում կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ,

-ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին,

-կարգի 14-րդ և 17-րդ կետերով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում և այլն:

**Մի շարք դեպքերում Հանձնաժողովի եզրակացությունները չեն համապատասխանել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, Լիցենզավորման կարգի, ինչպես նաև լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրության պահանջներին**

Հաշվի առնելով, որ ըստ ՀՀ օրենսդրության՝ իրավական ակտերը մեկնաբանվում են դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, ապա այն դեպքերում, երբ ներկայացված հայտերը չեն համա-պատասխանել ՀՀ օրենսդրության պահանջներին, սակայն լիցենզավորման հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն և անձինք լիցենզավորվել են, պետք է փաստել, որ Հանձնաժողովի եզրակացությունները չեն համապատասխանել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 29.06.02թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի՝ 20-րդ կետի, ինչպես նաև լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրության 2-րդ, 18-րդ և 19-րդ կետերի պահանջներին:

Այն դեպքերում, երբ ներկայացված հայտերը չեն համապատասխանել ՀՀ օրենսդրության պահանջներին /Օրինակ՝ լիցենզավորվող գործունեության համար սահմանված պարտադիր սարքավորումների բացակայություն, թերություններ և այլն/, սակայն լիցենզավորող հանձնաժողովի կողմից անձինք լիցենզավորվել են, ապա փակ գաղտնի քվեարկության ընթացքում հանձնաժողովի կողմ քվեարկած անդամները որոշումներ կայացնելիս առաջնորդվել են այլ մոտեցումներով՝ հաշվի չառնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Նման մոտեցմամբ իրականացված լիցենզավորման գործընթացի պարագայում կարելի է պնդել, որ վերանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների, ինչպես նաև լիցենզավորման գործակալության կողմից այդ պահանջների առկայության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների անհրաժեշտությունը, քանի որ լիցենզավորող հանձնաժողովը իր որոշումները /եզրակացությունները/ կայացնելիս չի հիմնվում այդ ուսումնասիրությունների արդյունքների վրա:

Եզրակացությունները, ըստ օրենսդրության պահանջի, լիցենզավորման հանձնաժողովը ներկայացնում է ՀՀ առողջապահության նախարարին: Նախարարն իր որոշումներն ընդունում է համապատասխան եզրակացություննեի հիման վրա, սակայն լիցենզավորող մարմինը, համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի, իրավունք ունի որոշման համար հիմք չընդունել հանձնաժողովի եզրակացությունները՝ հիմնավորելով եզրակացությունները չընդունելու պատճառները:

Հավելված 2-ում բերված են 01.01.17թ-01.11.18թ. ընթացքում բժշկական օգնության և սպասարկման իրականացող լիցենզավորված թվով 67 անձանց ցանկը, որոնց ներկայացրած հայտերը չեն համապատասխանել ՀՀ օրենսդրության պահանջներին և գործակալության կողմից տրվել է բացասական եզրակացություն, սակայն Հանձնաժողովը փակ գաղտնի քվեարկությամբ տվել է դրական եզրակացություն և անձինք լիցենզավորվել են:

### Ե. ՀՀ առողջապահության նախարարի 03.09.2014թ. թիվ 58-Ն հրամանի համապատասխան իրականցված ընտրանքային ուսումնասիրությունների վերաբերյալ

ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված բժշկական օգնության և սպասարկման Լիցենզավորման Կարգի 12-րդ կետով սահմանվել է, որ.

-«*Բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստույգ ճշտումը լիազոր մարմնի կողմից իրականացվում է ընտրանքային ուսումնասիրության միջոցով, որի արդյունքների հիման վրա կազմվում է արձանագրություն: Ընտրանքային ուսումնասիրության անցկացման կարգը սահմանում է լիազոր պետական մարմինը*» /12-րդ կետը խմբագրվել է ՀՀ կառավարության 01.08.13թ. թիվ 956-Ն որոշմամբ և ուժի մեջ է մտել 24.12.2013թ.–ից/:

Համաձայն լիցենզավորման կարգի նշված կետի, ՀՀ առողջապահության նախարարի կողմից 03.09.2014թ.-ին ընդունվել է «Ընտրանքային ուսումնասիրության կարգը սահմանելու մասին» թիվ 58-Ն հրամանը /ուժի մեջ է 11.10.14թ.-ից/, ըստ այդ կարգի՝

-ընտրանքային ուսումնասիրությունն իրականացվում է համակարգչային պատահական ընտրության միջոցով /2-րդ կետ/,

-ընտրանքային տեղում ուսումնասիրությունը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանի հիման վրա, նշելով՝ ուսումնասիրության նպատակը, իրականացման վայրը, ժամկետը և այլն,

-ընտրանքային /տեղում/ ուսումնասիրություն իրականացնող հանձնաժողովը կամ աշխատակիցը ուսումնասիրում է լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտում և կից փաստաթղթերում նշված տեղեկությունների իսկությունը՝ օրենսդրությամբ սահմանված լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայությունը և ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմում է արձանագրություն /կարգի 8-րդ կետ/:

**20% լիցենզավորվող անձանց մոտ տեղում ուսումնասիրություններ չեն իրականացվում**

Ուսումնասիրելով 01.01.2017-01.11.2018թթ. ընթացքում ՀՀ ԱՆ կողմից իրականացված լիցենզավորման գործընթացները, պետք է նշել, որ լիազոր մարմինը համակարգչային պատահական ընտրությունները իրականացնում է համապատասխան համակարգչային ծրագրի միջոցով իրականացված խաղարկությունների հիման վրա և յուրաքանչյուր խաղարկության արդյունքում հայտ ներկայացրած անձանց ընդհանուր թվի 80%-ի մոտ տեղում՝ իրականացվում են լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության վերաբերյալ ուսումնասիրություններ, իսկ 20% լիցենզավորվող անձանց մոտ տեղում ուսումնասիրություններ չեն իրականացվում, վերջիններիս մոտ իրականացվում են միայն փաստաթղթային ուսումնասիրություններ /նշվածը բերված է նաև ՀՀ առողջապահության նախարարի 15.11.18թ. թիվ ԱԹ/14.2/16663-18 գրությամբ/:

Տեղում ուսումնասիրվող 80% չափի և չուսումնասիրվող 20% չափի հարաբերակցությունների սահմանման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից որևէ իրավական ակտ չի ընդունվել:

**Կազմակերպված խաղարկություններին մասնակցած 512 հայտատուներից 95-ի մոտ չեն իրականացվել տեղում ուսումնասիրություններ**

Նշված ժամանակաշրջանում համաձայն լիցենզավորող մարմնի կողմից ընդունված Կարգի, միայն բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման նպատակով՝ կազմակերպված խաղարկություններին մասնակցած 512 հայտատուներից 95-ի մոտ չի իրականացվել տեղում ուսումնասիրություններ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության վերաբերյալ: Վերջիներիս մոտ իրականացվել են միայն փաստաթղթային ուսումնասիրություններ և 75 անձի տրամադրվել է լիցենզիա, 16-ը մերժվել է, իսկ 4-ի գործընթացը դադարեցվել է սեփական դիմումի համաձայն:

Հավելված 3-ում բերված են 01.01.17թ-01.11.2018թ. ընթացքում բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման նպատակով դիմած 95 հայտատուների ցանկը, որոնց մոտ համաձայն 58-Ն հրամանի չի իրականացվել տեղում ուսումնասիրություններ օրենսդրությամբ սահմանված լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության վերաբերյալ:

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 15-րդ հոդվածները ՀՀ կառավարությունը 05.12.2002թ. թիվ 1936-Ն և 29.10.2009թ. թիվ 1275-Ն որոշումներով սահմանել է *բժշկական օգնության և սպասարկման տեսակների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության և մասնագիտական որակավորման պայմաններն ու պահանջները:*

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Լիցենզավորման Կարգի «Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմանները» բաժնի 14-րդ կետը սահմանում է, որ.

-լիցենզավորվող անձինք պետք է ապահովեն բժշկական հաստատություններին ներկայացվող մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պարտադիր պայմանները և պահանջները, որը ըստ նույն լիցենզավորման Կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի՝ լիցենզիա տրամադրելու հայտերի մերժման հիմք է:

Առանց բժշկական հաստատություններին ներկայացվող պարտադիր պայմանների և պահանջների ապահովման ներկայացված հայտերը պետք է մերժվեն համաձայն ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման Կարգի 14-րդ և 20-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների:

**Տեղում ուսումնասիրություն-ներ չիրականացնելը հանգեցնում է մի իրավիճակի, որի արդյունքում լիազոր մարմնի կողմից նշված հայտատուների մոտ չի ուսումնասիրվում /դիտարկվում/ Լիցենզավորման Կարգի 14-րդ կետի պահանջը:**

Այն դեպքերում, երբ ՀՀ առողջապահության նախարարի 03.09.14թ. «Ընտրանքային ուսումնասի-րության կարգը սահմանելու մասին» թիվ 58-Ն հրամանի համաձայն իրականացված խաղարկութ-յունների արդյունքում 20% հայտատուների մոտ չի իրականացվում տեղում ուսումնասիրություններ՝ հանգեցնում է մի իրավիճակի, որի արդյունքում լիազոր մարմնի կողմից նշված հայտատուների մոտ չի ուսումնասիրվում /դիտարկվում/ Լիցենզավորման Կարգի 14-րդ կետի պահանջը.

*«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պետք է ապահովեն ՀՀ օրենսդրությամբ բժշկական հասպապրություններին ներկայացվող կառուցվածքային, մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պայմաններին և պահանջներին ու շինարարական նորմերին համապատասխանությունը»:*

Սույն պահանջները հայտատուների կողմից չապահովելը, Լիցենզավորման Կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի համաձայն, լիցենզիա տրամադրելու հայտերի մերժման հիմք է:

Նշված դեպքերում հայտատուները լիցենզավորվում են միայն ներկայացված հայտի և կից փաստաթղթերի համար Կարգով սահմանված պահանջների համապատասխանության պարագայում:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը հստակ սահմանում է լիցենզիա տրամադրելու մերժման հիմքերը՝ մասնավորապես լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե՝

- դիմողի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են,

-ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին,

- օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված են այլ դեպքեր,

հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու պարագայում լիցենզավորող մարմնի կողմից այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր և այլն:

Վերլուծելով վերոշարադրյալը պետք է փաստել որ.

1. ՀՀ առողջապահության նախարարի 03.09.2014թ. «Ընտրանքային ուսումնասիրության կարգը սահմանելու մասին» թիվ 58-Ն հրամանը ընդունվել է ՀՀ

կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման Կարգի 12-րդ կետի համաձայն:

2. ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման Կարգի 14-րդ կետում (բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պետք է ապահովեն ՀՀ օրենսդրությամբ բժշկական հաստատություններին ներկայացվող կառուցվածքային, մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պայմաններին և պահանջներին համապատասխանությունը) ներառված դրույթները բխել են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներից՝ մասնավորապես.

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է.

*-լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների իրականացման ժամանակ լիցենզավորված անձինք պարտավոր են պահպանել իրավական ակտերով և լիցենզավորման կարգերով տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները*

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է.

-լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների համար, որոնց իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ, ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև լիցենզավորման կարգերով կարող են սահմանվել մասնագիտական որակավորման պահանջներ

Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է.

-եթե լիցենզավորման ենթակա գործունեության առանձին տեսակների իրականացման համար պահանջվում է հատուկ տեխնիկական պայմանների առկայություն, ապա լիցենզավորման ենթակա նման գործունեությամբ զբաղվելու համար կարող են սահմանվել կոնկրետ տեխնիկական պահանջներ և պայմաններ,

-լիցենզավորման ենթակա գործունեության տեսակին վերաբերող տեխնիկական պահանջները և պայմանները սահմանվում են օրենքով կամ իրավական այլ ակտերով:

3. ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման Կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետը՝ լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե այն չի համապատասխանում Լիցենզավորման Կարգի 14-րդ կետով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին, բխում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի (լիցենզիայի հայտի մերժումը) 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջից:

**Տեղում ուսումնասիրություն-ներ չիրականացնելը հանգեցնում է մի իրավիճակի, որի արդյունքում լիազոր մարմնի կողմից նշված հայտատուների մոտ չեն ուսումնասիրվում նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ, 15-րդ հոդվածների պահանջները:**

Հետևաբար, այն դեպքում, երբ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 58-Ն հրամանի համաձայն 20% հայտատուների մոտ չեն իրականացվում տեղում ուսումնասիրություններ, ապա դրա արդյունքում լիազոր մարմնի կողմից նշված հայտատուների մոտ չեն ուսումնասիրվում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ, 15-րդ հոդվածների և ՀՀ օրենսդրության պահանջների հիման վրա ընդունված Լիցենզավորման Կարգի 14-րդ կետով սահմանված դրույթների պահանջները:

14-րդ կետով նախատեսված պահանջները հայտատուների կողմից չապահովելը, ըստ Կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի, որը ևս բխում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջից (29-րդ հոդված), լիցենզիա տրամադրելու հայտերի մերժման հիմք է:

Հարկ է նշել, որ իրավական ակտերի փոխգործակցությունները կարգավորված են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով /ուժը կորցրել է 07.04.18թ.-ից/, ինչպես նաև «Նորմատիվ ակտերի մասին» ՀՀ օրենքով:

---

***20% հայտատուների մոտ ուսումնասիրություններ չիրականացնելու դեպքերում լիցենզավորման գործընթացների արդյունքում կարող են լինել դեպքեր, երբ լիցենզավորված անձինք ի սկզբանե բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ կմատուցեն՝ չապահովելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված բժշկական հաստատություններին ներկայացվող մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պարտադիր պայմանների և պահանջների առկայությունը:***

---

Վերջիններս գործունեություն կծավալեն մինչև ոլորտը վերահսկող մարմինների կողմից դրանց հայտնաբերումը և սահմանված կարգով կանխումը:

Միաժամանակ պետք է նշել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվել է բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակները՝ մասնավորապես.

ա/ առաջնային բժշկական օգնությունը՝ յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը երաշխավորվում է պետության կողմից.

բ/ մասնագիտացված բժշկական օգնությունը՝ որպես ախտորոշման և բժշկական առանձնահատուկ մեթոդների ու բարդ բժշկական տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ:

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի պահանջները, ՀՀ կառավարությունը 27.03.2008թ.-ին ընդունել է «ՀՀ-ում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» թիվ 276-Ն որոշումը, որի 2.1 կետով հաստատվել է.

ա/ բժշկական օգնության և սպասարկման տեսակների իրականացման համար ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվում են մակարդակներ՝ ըստ տեխնիկատեխնոլոգիական և մասնագիտական որակավորման պարտադիր պահանջների ու պայմանների հագեցվածության աստիճանի:

բ/ առաջին մակարդակի համար պահանջվում է.

-համապատասխան բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար անհրաժեշտ նվազագույն տեխնիկատեխնոլոգիական և մասնագիտական որակավորման հագեցվածություն,

-ըստ մակարդակի հաջորդական աճման՝ առավելագույն տեխնիկատեխնոլոգիական հագեցվածություն և մասնագիտական որակավորման առավել նեղ մասնագիտական կատարելագործման պարտադիր պահանջների ու պայմանների առկայություն:

Թիվ 58-Ն հրամանի համաձայն իրականացված լիցենզավորման գործընթացները, երբ յուրաքանչյուր խաղարկությանը մասնակցած ընդհանուր հայտատուների թվից՝ 80%-ի մոտ իրականացվում է լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության ուսումնասիրություններ, իսկ 20%-ի մոտ ուսումնասիրություններ չի իրականացվում, փաստում է, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանվել է լիցենզավորման գործընթացների տարբեր մոտեցումներ 80% /ուսումնասիրվող/ և 20% /չուսումնասիրվող/ հայտատուների նկատմամբ:

Պետք է նշել, որ ըստ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջի՝ լիցենզավորման սկզբունքներն են.

ա/ ՀՀ տարածքում տնտեսական գործունեության բնագավառում միասնական քաղաքականության ապահովումը,

բ/ Լիցենզավորման միասնական կարգի և սկզբունքների սահմանումը և այլն:

**Բոլոր հայտատուների համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից պետք է մշակվի լիցենզավորման միասնական կարգ՝ միասնական մոտեցումներով**

Հաշվի առնելով նշված դրույթը, բոլոր հայտատուների համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից պետք է մշակվի /սահմանվի/ միասնական կարգ՝ միատեսակ մոտեցումներով, բացառելով հայտատուների մի մասի նկատմամբ մեկ մոտեցում սահմանող, իսկ այլ մասի նկատմամբ մեկ ուրիշ մոտեցումներ սահմանող իրավական ակտերի ընդունումը:

Այսպիսով, լիցենզավորման գործընթացներում լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության վերաբերյալ ուսումնասիրությունները անհրաժեշտ է իրականացնել բոլոր հայտատուների մոտ, այլ ոչ 80%-ի մոտ, բացառելով ընտրանքային ուսումնասիրություններ իրականացնելու մոտեցումը:

***Ծանոթություն***՝ *Հաշվեքննության ընթացքում հայտնաբերված վերոգրյալ փաստերը պարունակող արձանագրությունը, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ներկայացվել են հաշվեքննության օբյեկտի ղեկավարին: Վերջինիս կողմից որոշ փաստերի վերաբերյալ ներկայացվել են բացատրություններ /կցվում են հավելված 4-ում/:*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1

ՀՀ Առողջապահության նախարարությունը բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի լիցենզավորման գործընթացները իրականացրել է ՀՀ օրենսդրության պահանջները անտեսելով՝ մասնավորապես Լիցենզավորող մարմնի կողմից չի իրականացվել ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Հավելված 5-ի 17–րդ կետի պահանջը, որի արդյունքում չի սահմանվել առանձին բժշկական սարքավորումների համար սահմանված օգտագործման ժամկետներ և հնարավոր այլ անհրաժեշտ չափորոշիչներ, որոնց չբավարարելը, ըստ Լիցենզավորման կարգի 20-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի, հանդիսանում է հայտերի մերժման հիմք:

2

Լիցենզավորման կարգով սահմանված՝ 18-րդ կետի պահանջով իրականացված լիցենզավորման գործընթացը հանգեցրել է մի իրավիճակի, որ լիցենզավորվող անձինք մասնագիտական ապահովվածությանը վերաբերող փաստաթղթերը ներկայացնում են արդեն իսկ լիցենզավորվելուց հետո /գործունեությունը սկսելուց 5 օր առաջ/, որը հնարավորություն չի ընձեռնում մինչև անձանց լիցենզիա տրամադրելը գնահատել նրանց մասնագիտական ապահովվածության համապատասխանությունը սահմանված պահանջներին:

3

01.01.2017-01.11.2018թթ. ընթացքում շուրջ 400 լիցենզավորված անձանցից 268-ը չեն ներկայացրել մասնագիտական որակավորման վերաբերյալ փաստաթղթերը, որոնք ըստ Լիցեզավորման կարգի 18-րդ կետի պահանջի, պետք է ներկայացվեն լիցենզավորված գործունեությունը սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

268 լիցենզավորված անձանց կազմից, որոնք գործունեություն են ծավալել և չեն ներկայացրել մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերը համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջի, լիցենզիայի գործողության կասեցման հիմք է:

4

ՀՀ առողջապահության նախարարությունը բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի լիցենզավորման գործընթացներն իրականացրել է ՀՀ օրենսդրության պահանջները անտեսելով, որի արդյունքում չի իրականացրել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումներ:

5

Այն դեպքերում, երբ լիցենզավորվող անձանց ներկայացրած հայտերը չեն համապատասխանել ՀՀ օրենսդրության պահանջներին, սակայն լիցենզավորման հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն և անձինք լիցենզավորվել են, պետք է փաստել, որ Հանձնաժողովի եզրակացությունները հակասել են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 29.06.02թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի՝ 20-րդ կետի, ինչպես նաև լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրության 2-րդ, 18-րդ և 19-րդ կետերի պահանջներին:

6

Լիցենզավորման գործընթացներում լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության վերաբերյալ ուսումնասիրություններն անհրաժեշտ է իրականացնել բոլոր հայտատուների մոտ, այլ ոչ թե 80%-ի մոտ՝ բացառելով ընտրանքային ուսումնասիրություններ իրականացնելու մոտեցումը /ՀՀ առող-ջապահության նախարարի 03.09.2014թ. «Ընտրանքային ուսում-նասիրության կարգը սահմանելու մասին» թիվ 58-Ն հրամանի պահանջներ/:

Արդյունքում չի պահպանվել բժշկական օգնության և սպասարկման գործունեության լիցենզավորման իրականացման նպատակային արդյունավետության սկզբունքը:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ առողջապահության նախարարությանը**

1. Ընդունել նորմատիվ իրավական ակտ, որով առանձին բժշկական սարքավորումների համար կսահմանվի օգտագործման ժամկետներ և անհրաժեշտ այլ չափորոշիչներ /շահագործվող սարքավորումներին ներկայացվող նվազագույն պարամետրեր, ճշտության դասեր և այլն/:

2. Լիցենզավորվող անձանց մոտ մասնագիտական ապահովվածության համապատասխանությունը սահման-ված պահանջներին գնահատել մինչև անձանց լիցենզիա տրամադրելը և լիցենզավորման կարգերում նախատեսել, որ կրթության վկայականների, ինչպես նաև ՇՄԶ հավաստագրերի հետ ներկայացվի նաև գործունեության իրականացման համար անհրաժեշտ մասնագետների և լիցենզավորվող անձանց միջև կնքված աշխատանքային պայմանագրեր կամ համատեղ աշխատանք իրակա-նացնելու պարտավորագրեր, որոնք լիազոր մարմնին պետք է ներկայացվի մինչև անձանց լիցենզիա տրամադրելը:

3. Բժշկական օգնության և սպասարկման իրականա-ցում գործունեության տեսակի լիցենզավորման գործընթացներում իրականացնել Ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումներ:

4. Ստեղծել միասնական տեղեկատվական բազա, որը կներառի լիցենզավորված անձանց մասնագիտական ապահովվածության, Ֆիզիկական անձանց մասնագի-տական որակավորման ստուգումների, Ֆիզիկական անձանց շարունակական մասնագիտական զարգացման՝ ՇՄԶ գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն՝ հաշվի առնելով, որ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջի, 2021թ. հունվարի 1-ից ՇՄԶ հավաստագիր չունեցող անձանց չի թույլատրվելու իրականացնել իրենց մասնագիտական գործունեությամբ պայմանավորված աշխատանքային պարտականությունները:

5. Այն դեպքերում, երբ լիցենզավորվող անձանց ներկայացրած հայտերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին և ըստ նույն օրենսդրության պահանջի ենթակա են մերժման, լիցենզավորման հանձնաժողովի որոշումները /եզրակա-ցությունները/ պետք է բխեն բացառապես ՀՀ օրենսդրության պահանջներից, ինչպես նաև մասնագիտացված ստորաբաժանման ուսումնասիրութ-յունների արդյունքներից:

Լիցենզավորման գործընթացներում լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայության վերաբերյալ ուսումնասիրությունները անհրաժեշտ է իրականացնել բոլոր հայտատուների մոտ՝ բացառելով ընտրանքային ուսումնասիրություններ իրականացնելու մոտեցումը և լիցենզավորման կարգերում իրականացնել համապատասխան փոփոխություններ:

6. Լիազոր մարմնի կողմից լիցենզավորված անձանց մասին իրականացված տեղեկությունների հաշվառման, վերլուծության և գնահատման վերաբերյալ տեղեկատվու-թյունները /առաջնահերթ ռիսկերի տեսանկյունից/ որո-շակի պարբերականությամբ ներկայացնել ներկայացնել ո-լորտը վերահսկող Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին:

**Հավելված 1.1**

**Լիցենզավորված անձանց կողմից մասնագիտական որակավորման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ**

Բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման գործընթաց

**01.01.2017-01.11.2018թթ..**

| ՀՀ | **Անվանումը** /Լիցենզավորված անձանց, որոնց մոտ չի իրականացվել տեղում ուսումնասիրություններ, ըստ 03.09. 2014թ. թիվ 58-Ն հրամանի իրականացված խաղարկությունների/ | Հայտի համարը | Գրանցման ամսաթիվ | Լիցենզիայի տրամադրում | | **Լիցենզավորված անձանց կողմից մասնագիտական որակավորման վերաբերյալ ներկայացված փաստաթղթեր** | | Կազմակերպություններին ՀՀ ԱՆ-ի կողմից Տրամադրվ. Պետ պատվեր /մլն. դրամ/ 2017թ. | 2018թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *4* | *5* | *7* | *8* | *9* | *10* | *11* | *12* |
| | **01/10/2017** | | | | | | | | |
| 1 | «Արինտերլև» ՍՊԸ | 4/35783-16 | 12/21/2016 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 136,260.8 | 90,457.0 |
| 2 | Ա/Ձ Արարատ Գևորգյան | 4/34656-16 | 12/12/2016 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **1/25/2017** | | | | | | | | |
| 3 | «Ուջանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ | 6/621-17 | 1/13/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 24,682.4 | 25,209.3 |
| 4 | «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» | 6/657-17 | 1/13/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 572,958.8 | 571,394.7 |
| 5 | «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների | 4/1933-17 | 1/24/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 123,036.2 | 119,700.1 |
| | **2/8/2017** | | | | | | | | |
| 6 | «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 6/3548-17 | 2/7/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 212,208.1 | |
| 7 | Ա/Ձ Արշակ Մարգարյան | 4/2617-17 | 1/30/2017 | Տրամադրվ. | | ոչ բավարար | | | |
| 8 | Ա/Ձ Էդգար Պապիկյան | 4/3037-17 | 2/2/2017 | | Մերժված | | | | |
| | **3/1/2017** | | | | | | | | |
| 9 | Ա/Ձ Դավիթ Ասատրյան | 4/4080-17 | 2/10/2017 | Տրամադրվ. | | ոչ բավարար | | | |
| 10 | Ա/Ձ Հարություն Հարությունյան | 4/5336-17 | 2/21/2017 | | Մերժված | | | | |
| | **3/20/2017** | | | | | | | | |
| 11 | «Արագածի առողջության կենտրոն» ՀՈԱԿ | 6/6928-17 | 3/6/2017 | | Մերժված | | | | |
| 12 | «Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/7686-17 | 3/13/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 68,309.2 | 64,518.1 |
| 13 | «Միեր Գասիա» ՍՊԸ | 4/8130-17 | 3/15/2017 | | Մերժված | | | | |
| | **4/13/2017** | | | | | | | | |
| 14 | «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ | 4/12310-17 | 4/7/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 15 | «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/11998-17 | 4/5/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 185,512.9 | 171,092.9 |
| 16 | «Հիստոջեն» Պաթոլոգիայի գիտագործնական կենտրոն ՍՊԸ | 4/12629-17 | 4/11/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **5/4/2017** | | | | | | | | |
| 17 | «Միեր Գասիա» ՍՊԸ | 4/13142-17 | 4/13/2017 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| 18 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 6/14142-17 | 4/21/2017 | Տրամադրվ. | | ոչ բավարար | | | |
| 19 | «Լիլիդենտիս» ՍՊԸ | 4/15058-17 | 5/2/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 20 | Ա/Ձ Նելլի Գեղամյան | 4/15057-17 | 5/2/2017 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| | **5/16/2017** | | | | | | | | |
| 21 | «Թիվ 12 Պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/15345-17 | 5/3/2017 | | Ընթ. չի տրվել | | | | |
| 22 | Ա/Ձ Արայիկ Դանիելյան | 4/15831-17 | 5/5/2017 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **5/31/2017** | | | | | | | | |
| 23 | «Երևանում ուռուցքաբանության ֆրանսիական ինստիտուտ» ՍՊԸ | 4/17110-17 | 5/17/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **6/19/2017** | | | | | | | | |
| 24 | «Տ ԵՎ Գ» ՍՊԸ | 4/18553-25 | 6/12/2017 | Տրամադրվ. | | ոչ բավարար | | | |
| 25 | «ՀԵՆԴԱՐՏԴԵՆՏ» ՍՊԸ | 4/18553-30 | 2017-06-09 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| 26 | Ա/Ձ Մերի Կարապետյան | 4/18553-35 | 6/15/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **7/4/2017** | | | | | | | | |
| 27 | «Պրոմ-Տեստ» ՍՊԸ | 4/22131-17 | 6/28/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 28 | Ա/Ձ Կարեն Խաչատրյան | 4/21258-17 | 6/21/2017 | | Մերժված | | | | |
| | **7/24/2017** | | | | | | | | |
| 29 | «Բեգլարյան» ԲԿ ՓԲԸ | 6/23700-17 | 7/11/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 363,891.2 | 326,814.3 |
| 30 | Ա/Ձ Սոս Մոսինյան | 4/22880-17 | 7/6/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **8/24/2017** | | | | | | | | |
| 31 | «ՆԱԻՐԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | 6/27944-17 | 8/18/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 298,549.3 | 280,004.0 |
| 32 | «ԴԻԱԳԵՆ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ | 4/27545-17 | 8/14/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 33 | «ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԲԿ» ՍՊԸ | 4/28338-17 | 8/23/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **9/13/2017** | | | | | | | | |
| 34 | ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ | 6/28818-17 | 8/29/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 740,671.0 | 696,433.4 |
| 35 | «Արտլաբ» բժշկական կենտրոն ՍՊԸ | 4/29704-17 | 9/6/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 36 | Ա/Ձ Սոհեիլ Կոլաջի | 4/29880-17 | 9/8/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 37 | Ա/Ձ Աստղիկ Տիգրանյան | 4/30269-17 | 9/12/2017 | Տրամադրվ. | | թերի | | | |
| | **9/28/2017** | | | | | | | | |
| 38 | «ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ | 4/31411-17 | 9/25/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 39 | Ա/Ձ Գվիդոն Սիմոնյան | 4/30159-17 | 9/12/2017 | | Մերժված | | | | |
| | **10/17/2017** | | | | | | | | |
| 40 | ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ | 6/33383-17 | 10/13/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 41 | «Ադամյան դպրոց» ՍՊԸ | 4/32649-17 | 10/6/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 42 | «Ալֆալաբ» ՍՊԸ | 4/32639-17 | 10/6/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **11/7/2017** | | | | | | | | |
| 43 | «Գրիգ Դենտ» ՍՊԸ | 4/34041-17 | 10/20/2017 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| 44 | Ա/Ձ Էվելինա Խաչատրյան | 4/34336-17 | 10/24/2017 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| | **11/15/2017** | | | | | | | | |
| 45 | «Էկոռեյ» ՍՊԸ | 4/35525-17 | 11/6/2017 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| 46 | «Արթդանի» ՍՊԸ | 4/36175-17 | 11/13/2017 | Տրամադրվ. | | | մասն. ներկայաց. | | |
| | **12/5/2017** | | | | | | | | |
| 47 | «Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ | 6/38351-17 | 12/4/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | 2,086,704.7 | 2,057,666.3 |
| 48 | «Լիտտե» ՍՊԸ | 4/37154-17 | 11/22/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 49 | Ա/Ձ Արմեն Սարգսյան | 4/37975-17 | 12/1/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 50 | Ա/Ձ Արմեն Սուքիասյան | 4/38189-17 | 12/4/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **12.21.2017** | | | | | | | | |
| 51 | Ա/Ձ Գևորգ Ղլեչունց | 4/40530-17 | 12/19/2017 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **2018 թվական** | | | | | | | | |
| | **1/17/2018** | | | | | | | | |
| 52 | «Ալավերդու ԲԿ» ՓԲԸ | 4/41124-17 | 12/25/2017 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | 328,028.3 |
| 53 | «Շենգավիթ» բժշկական կենտրոն ՓԲԸ | 6/840-18 | 1/16/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | 510,062.6 |
| | **1/30/2018** | | | | | | | | |
| 54 | «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ | 6/1032-18 | 1/17/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | 1,058,028.2 |
| 55 | Ա/Ձ Արտաշես Մկրտչյան | 4/2190-18 | 1/30/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| | **2/14/2018** | | | | | | | | |
| 56 | Ա/Ձ Հակոբ Գրիգորյան | 4/2399-18 | 1/31/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| 57 | Ա/Ձ Արթուր Գևորգյան | 4/3439-18 | 2/12/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 58 | Ա/Ձ Գվիդոն Սիմոնյան | 4/3498-18 | 2018-03-14 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **3/6/2018** | | | | | | | | |
| 59 | «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 6/3787-18 | 2/14/2018 | | Մերժված | | | | 214,246.9 |
| 60 | «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ | 6/4814-18 | 2/23/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | 715,515.6 |
| 61 | «Դոկտոր Բ. Ղ.» ՍՊԸ | 4/5481-18 | 3/2/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **3/22/2018** | | | | | | | | |
| 62 | «ԷԼՏԱ ՄԵԴ» ՍՊԸ | 4/6025-18 | 3/12/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 63 | «Կարդիոմեդ ընտանեկան բժշկական կենտրոն» ՍՊԸ | 6/6338-18 | 3/13/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| 64 | Ա/Ձ Անդրանիկ Գրիգորյան | 4/6026-18 | 3/12/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 65 | Ա/Ձ Մարատ Սարգսյան | 4/6063-18 | 3/12/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **4/16/2018** | | | | | | | | |
| 66 | «Միեր Գասիա» ՍՊԸ | 4/7614-18 | 3/23/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 67 | «Սիմիլիա» ՍՊԸ | 4/9593-18 | 4/12/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 68 | Ա/Ձ Սերգեյ Քեշիշյան | 4/7444-18 | 3/22/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **5/29/2018** | | | | | | | | |
| 69 | «Միքայելյան Վիրաբուժության Ինստիտուտ» ՓԲԸ | 6/12325-18 | 5/17/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 70 | «Ստոմիոն» ՍՊԸ | 4/11953-18 | 5/14/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| 71 | Ա/Ձ Տիգրան Հովակիմյան | 4/12389-18 | 5/18/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **6/18/2018** | | | | | | | | |
| 72 | Ա/Ձ Լուսինե Ասատրյան | 4/13780-18 | 5/31/2018 | | Ընթ. չի տրվել | | | | |
| | **7/3/2018** | | | | | | | | |
| 73 | Ա/Ձ Սվետլանա Գյուլազյան | 4/15630-18 | 6/15/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| 74 | Ա/Ձ Արմեն Ղանդիլյան | 4/15662-18 | 6/15/2018 | | Ընթ. չի տրվել | | | | |
| | **7/16/2018** | | | | | | | | |
| 75 | «Հրազդանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/16343-18 | 6/20/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | 5,576.3 |
| 76 | «Մեծամորի ԲԿ» ՓԲԸ | 6/19404-18 | 7/11/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | 213,063.7 |
| 77 | Ա/Ձ Աշոտ Գասպարյան | 4/21468-18 | 7/27/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **7/30/2018** | | | | | | | | |
| 78 | «Առողջ Կյանքի Ուղի» բարեգործական հասարակական կազմակ. | 4/20949-18 | 7/24/2018 | | Մերժված | | | | |
| 79 | «Նոր Արաբկիր առողջության կենտրոն» ՓԲԸ | 6/19499-18 | 7/12/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | 258,390.2 |
| 80 | Ա/Ձ Աշոտ Գասպարյան | 4/21468-18 | 7/27/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| | **8/14/2018** | | | | | | | | |
| 81 | «Վիվալդի» ՍՊԸ | 4/20810-18 | 7/24/2018 | | Մերժված | | | | |
| 82 | «Իմմա» ՍՊԸ | 4/21886-18 | 8/1/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| | **8/21/2018** | | | | | | | | |
| 83 | Ա/Ձ Կարինե Ազատյան | 4/22138-18 | 8/3/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 84 | Ա/Ձ Վիլյամ Համզյան | 4/22495-18 | 8/7/2018 | Տրամադրվ. | | | Ներկայացվ. է | | |
| | **8/31/2018** | | | | | | | | |
| 85 | «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշման.» | 11/24380-18 | 8/24/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 86 | «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ | 4/24326-18 | 8/24/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 87 | «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ | 4/24328-18 | 2018-08-24 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 88 | «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ | 5/24341-18 | 8/24/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | |
| 89 | «Արևհատ և Անի» ԸԲԱՊ ՍՊԸ | 4/24612-18 | 8/28/2018 | | Ընթ. չի տրվել | | | | |
| | **9/20/2018** | | | | | | | | |
| 90 | «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/25217-18 | 9/4/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | 110,508.7 |
| 91 | «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» | 6/25420-18 | 9/5/2018 | Տրամադրվ. | | Չի ներկայաց. | | | 153,477.4 |
| 92 | «Ա. Օհանյան» ՍՊԸ | 4/25441-18 | 9/5/2018 | | Մերժված | | | | |
| 93 | «Դա Վինչի» Դենտալ կլինիկա ՍՊԸ | 4/25766-18 | 9/7/2018 | | Մերժված | | | | |
| | **10/27/2018** | | | | | | | | |
| 94 | «Դա Վինչի» Դենտալ կլինիկա ՍՊԸ | 10/8/2018 | 10/8/2018 | | Մերժված | | | | |
| 95 | «Մասիս Հոսպիս» Դենտալ կլինիկա ՍՊԸ | 10/24/2018 | 10/24/2018 | | Մերժված | | | | |

Որակավորման փաստաթղթեր Չի ներկայացրել **59** անձ

**Հավելված 1.2**

**Լիցենզավորված անձանց կողմից մասնագիտական որակավորման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ**

Բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման գործընթաց

**01.01.2017-01.11.2018թթ..**

| ՀՀ | **Անվանումը** /Լիցենզավորված անձանց որոնք մասնագիտական որակավորման վերաբերյալ փաստաթղթեր չեն ներկայացրել/ | **Հայտի համարը** | **Գրանցման ամսաթիվ** | **Լիցենզիայի տրամադրում** | **Մասնագիտական որակավորման վերաբերյալ փաստաթղթեր** |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| 1 | Ա/Ձ Աշոտ Թելունց | 4/34615-16 | 12/12/2016 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 2 | Ա/Ձ Տիգրան Էլյասյան | 4/48-17 | 12/14/2016 | Տրամադրվ | Ոչ բավարար |
| 3 | ՀՀ ԱՍՀՆ «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ | 4/36529-16 | 12/28/2016 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 4 | «Քայլ Մեդ» ՍՊԸ | 4/294-17 | 1/10/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 5 | «Լավանդա-նորֆարմ» ՍՊԸ | 4/1201-17 | 1/18/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 6 | Ա/Ձ Սուսաննա Մկրտումյան | 4/1496-17 | 1/20/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 7 | «Գավառի պոլիկլինիկա պետական» ՓԲԸ | 6/1732-17 | 1/23/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 8 | «Ս-Մեդ» ՍՊԸ | 4/1701-17 | 1/23/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 9 | Ա/Ձ Վրեժ Դանիելյան | 4/1717-17 | 1/23/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 10 | Ա/Ձ Գուրգեն Դավթյան | 4/1718-17 | 1/23/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 11 | «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» հիմնադրամ | 4/1898-17 | 1/24/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 12 | «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների | 4/1932-17 | 1/24/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 13 | «Սոնոմեդ» ՍՊԸ | 4/2043-17 | 1/25/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 14 | Ա/Ձ Արմեն Էլոյան | 4/2335-17 | 1/27/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 15 | «Արմենակ և Աննա Թադեոսեանների անվան բժշկական կենտրոն» | 4/3027-17 | 2/2/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 16 | Ա/Ձ Աննա Հակոբյան | 4/3018-17 | 2/2/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 17 | Ա/Ձ Արթուր Սարգսյան | 4/3050-17 | 2/2/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 18 | *Ա/Ձ Արսեն Կարապետյան* | *4/2951-17* | *2/2/2017* | *Տրամադրվ* | *Ոչ բավարար* |
| 19 | *«Ձեզ համար» բարեգործական հասարակական կազմակերպություն* | *4/3180-17* | *2/3/2017* | *Տրամադրվ* | *Ոչ բավարար* |
| 20 | «Մեդեսի» ՍՊԸ | 4/3928-17 | 2/10/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 21 | *«Ուիգմոր Քլինիք» ՓԲԸ* | *4/5191-18* | *2/21/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 22 | «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/7276-17 | 3/9/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 23 | Ա/Ձ Հովիկ Մանասյան | 4/7822-17 | 3/14/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 24 | *«Տելիա-Մեդ» ՓԲԸ* | *6/7962-17* | *3/14/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 25 | «Օն կլինիք-Անի» ՍՊԸ | 4/8787-17 | 3/17/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 26 | *«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ* | *6/8789-17* | *3/17/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 27 | *«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ* | *6/9503-17* | *3/22/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 28 | *«Իննովա Մեդ» ՍՊԸ* | *4/9558-17* | *3/22/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 29 | *«Նուբարաշեն» պոլիկլինիկա ՓԲԸ* | *6/11732-17* | *4/4/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 30 | «Ցիտո-Լաբ» ՍՊԸ | 4/12548-17 | 4/10/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 31 | «Ավա Մեդ» ՍՊԸ | 4/12628 | 4/11/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 32 | «Արագածի առողջության կենտրոն» ՀՈԱԿ | 6/12924-17 | 4/12/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 33 | «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/12851-17 | 4/12/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 34 | «Արաբկիր» մանկական պոլիկլինիկա ՓԲԸ | 6/12917-17 | 4/12/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 35 | Ա/Ձ Սարգիս Ավետիքյան | 4/13074-17 | 4/13/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 36 | «Սամվել Սարգսյանի և գործընկերներ» ՍՊԸ | 4/13019-17 | 4/13/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 37 | «Դալիան Գրուպ» ՍՊԸ | 4/13140-17 | 4/13/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 38 | «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ | 4/14393-17 | 4/25/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 39 | «Հիպոկրատես» ՍՊԸ | 4/14394-17 | 4/25/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 40 | «Արևհատ և Անի» ՍՊԸ | 4/14478-17 | 4/26/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 41 | *«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ* | *6/14442-17* | *4/26/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 42 | Ա/Ձ Լևոն Սիմոնյան | 4/15254-17 | 5/2/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 43 | «Թիվ 12 Պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/15345-17 | 5/3/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 44 | *«Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ* | *6/15333-17* | *5/3/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 45 | «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/15616-17 | 5/4/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 46 | «Լուսի Դենտ» ՍՊԸ | 4/16277-17 | 5/11/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 47 | «Մեդլայն» ՍՊԸ | 4/16694-17 | 5/15/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 48 | Ա/Ձ Արթուր Չոփուրյան | 4/17138-17 | 5/18/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 49 | «Հմայք-Դենտ» | 4/17620-17 | 5/22/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 50 | «ՄԻՌԱ ԴԵՆՏ» ՍՊԸ | 4/17899-17 | 5/24/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 51 | Ա/Ձ Անուշավան Շիրինյան | 4/18218-17 | 5/26/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 52 | Ա/Ձ Տիգրան Կիրակոսյան | 4/18553-17 | 5/30/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 53 | Ա/Ձ Սերգեյ Խաչատրյան | 4/19239-17 | 6/5/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 54 | «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ | 6/20249-17 | 6/12/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 55 | Ա/Ձ Գագիկ Խաչատրյան | 4/20539-17 | 6/14/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 56 | Ա/Ձ Հայկ Հարությունյան | 4/21007-17 | 6/19/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 57 | *«Դեյյուքս Դենտալ Լաբ» ՍՊԸ* | *4/21209-17* | *6/20/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 58 | Թիվ 19 Պոլիկլինիկա ՓԲԸ | 6/22208-17 | 6/28/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 59 | *Ա/Ձ Դավիթ Գրիգորյան* | *4/23538-17* | *7/11/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 60 | «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ | 6/24070-17 | 7/13/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 61 | *«Սուրբ Մարիամ» ՍՊԸ* | *6/24180-17* | *7/14/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 62 | «Էլիտ-Մեդ» բժշկական կենտրոն ՍՊԸ | 6/25176-17 | 7/24/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 63 | Ա/Ձ Լիանա Մովսիսյան | 4/25213-17 | 7/25/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 64 | Ա/Ձ Նարեկ Սարուխանյան | 4/26538-17 | 8/3/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 65 | Ա/Ձ Նորայր Սարգսյան | 4/27135-17 | 8/9/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 66 | *«ԿԱՐՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ* | *4/28025-17* | *8/18/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 67 | Ա/Ձ Հայկ Մանուկյան | 4/28253-17 | 8/22/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 68 | Ա/Ձ Դավիթ Դավթյան | 4/28337-17 | 8/23/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 69 | *Ա/Ձ Աշոտ Պողոսյան* | *4/28392-17* | *8/23/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 70 | Ա/Ձ Աստղիկ Տիգրանյան | 4/28425-17 | 8/24/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 71 | Ա/Ձ Մարիամ Վահանյան | 4/29096-17 | 8/31/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 72 | *«Կարմիր Բլուր» պոլիկլինիկա ՓԲԸ* | *6/29332-17* | *9/4/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 73 | Ա/Ձ Գայանե Ղազարյան | 4/29794-17 | 9/7/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 74 | *Ա/Ձ Վահե Անդրեասյան* | *4/30211-17* | *9/12/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 75 | «Հելլեն-Մեդ» ՍՊԸ | 4/30540-17 | 9/14/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 76 | *«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ* | *6/30998-17* | *9/20/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 77 | *Ա/Ձ Լիլիթ Մաթևոսյան* | *4/30923-17* | *9/20/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 78 | «Սանուս Վիտա» ՍՊԸ | 4/33021-17 | 10/10/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 79 | Ա/Ձ Նարե Բաքոյան | 4/33121-17 | 10/11/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 80 | «Օհանյան կլինիկա» ՍՊԸ | 4/33542-17 | 10/16/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 81 | «Ավա Մեդ» ՍՊԸ | 4/33569-17 | 10/16/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 82 | *Ա/Ձ Սերգեյ Առուստամյան* | *4/33856-17* | *10/18/2017* | *Տրամադրվ* | *Ոչ բավարար* |
| 83 | «Սիբիսիտի» ՍՊԸ | 4/34002-17 | 10/19/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 84 | *Արմենակ և Աննա Թաղեոսեանների ԲԿ Հիմնադրամ* | *4/34855-17* | *10/30/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 85 | *«Նոր Հարացք» ՍՊԸ* | *4/34859-17* | *10/30/2017* | *Տրամադրվ* | *Չի ներկայացվ.* |
| 86 | Ա/Ձ Վարդան Կարապետյան | 4/34987-17 | 10/31/2017 | Տրամադրվ | Ոչ բավարար |
| 87 | Ա/Ձ Հարություն Գասպարյան | 4/37545-17 | 11/27/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 88 | «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան» ՍՊԸ | 6/37677-17 | 11/28/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 89 | «Հիստոջեն» Պաթոլոգիայի գիտագործնական կենտրոն ՍՊԸ | 4/37935-17 | 11/30/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 90 | Ա/Ձ Աննա Ավետիսյան | 4/37934-17 | 11/30/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 91 | «Արինտերլև» ՍՊԸ | 4/38108-17 | 12/1/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 92 | Ա/Ձ Վարազդատ Սայադյան | 4/38638-17 | 12/5/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 93 | Ա/Ձ Ավետիք Բաբասյան | 4/39075-17 | 12/7/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 94 | «Իրա Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ | 4/40229-17 | 12/15/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 95 | Ա/Ձ Արմեն Նահապետյան | 4/40626-17 | 12/20/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 96 | Ա/Ձ  Վարդան Գևորգյան | 4/40960-17 | 12/22/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 97 | Ա/Ձ Շուշանիկ Մխիթարյան | 4/41093-17 | 12/25/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 98 | «Դյուցազն» ՍՊԸ | 4/41201-17 | 12/26/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
| 99 | «Ավան» հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ | 6/41440-17 | 12/27/2017 | Տրամադրվ | Չի ներկայացվ. |
